

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1—6

ՅՈՒՆՈՒԱՐ—ՅՈՒՆԻՍ

ԺԴ. ՏԱՐԻ 1940

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՓՈՔՐ-ՀԱՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԱՍԻՆ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

Դ.

(Շարունակութիւն):

Հիմայ նորէն քանի մը խօսք՝ Հայոց մասին ուրիշ, բոլորովին այլազան տեսութեանց նկատմամբ: Հայերէնի եւ «փոքրասիականաց» համեմատութեան խնդրոց մէջ բնական էր որ առնուէր մինչեւ անդամ Ետրուսկերէնը՝ Իտալիոյ սիրտն իսկ, քանի որ նաեւ հին աւանդութիւնք Փոքր-Ասիայէ դադրած կ'ըսեն այս երբեմնի ծագիկալ ազգն՝ որ հոս մայցաւ: Յիշատակարանաց մէջ պահուած լեզուն շատ վէճերու նիւթ է տակաւին, եւ զարմանալու չէ՛ որ արդէն կանուխէն փորձել ուզուած է հայերէնն ալ (նոյն իսկ Հ. Էլլիս, «Հայկական ծագումն Ետրուսկացւոց», Լոնտոն 1861, անգղ. ուրիշ գործեր ալ). բայց աւելի ոյժ տուաւ Մ. Բուզգէ («Ետրուսկարէն եւ Հայերէն», Ա., Բրիտաիանա 1890, հմմտ. ՀԱ., 1890, էջ 70 ևն). իսկ իւր նոր գործը՝ մահուանէ ետքը հրատարակուած Ա. Տորիի՝ չինք տեսած ²². Իտալիոյ խորքէն անցնինք՝ Բարբրաստանի սիրտը: Քանի որ երեւան եկաւ «Աքքատեան» խնդիրը՝ ինչո՞ւ չփորձել հոն ալ հայերէնը, որուն մէջ մութ մնացած անթիւ տարերք կան: Այս փորձն բրին մեր ազգայինք իսկ ²³. Եւ այժմ հայազէտ մը՝ Կիլիկեան հայերէնի ուսումնասիրութեամբ եւ այլ երկերով ծանօթ՝ կ'առնու նոյնը եր-

կարօրէն ուսումնասիրելու ²⁴: Քննութեան նպատակն սրչափ որ բուն հայ-ասորեստանեան եւ յատկապէս հայ-սուսերական ազգեան ըլլայ, հեղինակն՝ իւր ազգագրական ընդհանուր տեսակէտէն դրդուած, շատ աւելի զբաղած է «Հայք եւ Ուրալ-Ալտայեանք» խնդրով, բնականապէս բոլորովին տարբեր տեսակէտով գննելով Հ. Պեղերսէնի ²⁵ յարուցած խնդիրը՝ հայերէնի եւ թրքերէնի կամ ընդհանրապէս թաթարական եւ ազգակից լեզուաց հին փոխառութեանց մասին: Թէ կարստ ինչ տեսակէտէ ըմբռնած է ո՛չ միայն յատուկ հայերէնն, այլ ընդհանրապէս բոլոր արիական եւն կոչուածները, նկատի առնելով նախահնդեւրոպական վիճակներն ալ, կու գայ եզրակացութեանցս՝ զորոնք բանասիրաց քննութեան կ'առաջարկէ. այսինքն՝ հայերէնի մէջ կայ Հատեան-Ալարոտեան տարր մը, բայց «ասի հասարակաց է իրեն մէկ կողմանէ Քուսեան եւ միւս կողմանէ Ուզրո-Ֆիննական եւ թաթարական լեզուաց հեա»: Ուստի «Հայք արեւելեան ճիւղ մըն են Լեոնային-Ալարոտեան կամ նաեւ Պեղասպան-Հատեան մարդկային ցեղի մը (homo Syriacus, homo Alpinus) որ մարդախօսօրէն միջին եւ կապակցութեան օղակ մըն է Քամեանց եւ Ուրալ-Ալտայեանց միջեւ»: «Արիք ալ Ուրալակերպ (uraloid) Հնդիկերմանականք, իսկ Պեղասպան-Հատեանք ալ Քամեան-Ուրալալտայակերպ Հնդիկերմանականք»: Հետեւաբար Հայերէնը «անցման տիպար» մըն է «Ուրալակերպ Հնդիկերմանականին եւ Քամեանին միջեւ»: Պեղասպան-Հատեան լեզուատիպարը չէ հասած լիովին Արիականին աստիճանին, ուստի այս (Միջերկրեայ-Անտոլեան լեզուք, կամ նաեւ Իրերական-Ալարոտեան լեզուախումբը) նկատելու ենք՝ Հնդիկերմանականին հանդէպ՝

²² S. Bugge, Das Verhältnis der Etrusker zu den Indogermanen usw. Herausgegeben von Alfr. Torp. Straßburg 1909. «Ետրուսկացւոց ազգերն Հնդիկեւրոպականաց եւ Փոքր-Ասիոյ ու Յունաստանի նախալուսկան բնակչութեան հեա»:
²³ Հմմտ. Mich. Hokotzian, գրուած՝ O. S. La langue d'Accad. Եւն. եւ նորերս Յովհ. Սազըզ փաշա՝ «Աքքատեան լեզու»՝ ՀԱ. 1909, էջ 333—336, նմոյշ մ'ընդարձակ երկէ մը:

²⁴ J. Karst, Zur ethnischen Stellung der Armenier, Ի Յուշարձան, Վիեննա 1911, էջ 399—431:
²⁵ «Հայերէն եւ Դրացի լեզուներ», թրգմ. Հ. Թ. Կէտիկեան, Վիեննա 1907, Թ., էջ 170 ևն:

իրը Հին-հնդկերգերմանական կամ Կէս-Հնդկերգերմանական: Առաջինը կը բաժնէ երկու խմբի, մին՝ հիւսիսային, աւելի Ուրալա-կերպ Պեղատառաձևան (այս խմբէ՝ Հայերէնը), միւսը՝ հարաւային, աւելի Քամակերպ (Յտէոկրետական, Լիւկարէն եւն, միջին՝ Կարիացիք եւ Յարուակացիք):

Մենք այստեղ միայն հարեւանցի կը նշանակենք տեսութեանց շարք մը՝ առանց միջամուխ ըլլալու քննադատութեան: Աւելի եւս չենք կարող միջամուխ ըլլալ այս նախահնդկերկերոպական խնդրոց, որովհետեւ վերջապէս շատ վիճուած բան մըն է թէ ի՞նչ է նախաւոր Հնդկերկերոպականը, ո՞րը՝ իրենց հայերենիքը, միացե՞ղ ժողովուրդ մը թէ միախառն եղած ժողովուրդոց խումբ մը, եւ քանի որ այս խնդրոց մէջ ձայն ունին նաեւ մարդախօսք՝ ո՞րն էր նախաւոր տիպարը, նոյն իսկ արդի Եւրոպացւոց մէջ տեսնուած գոնէ կրկին տիպերու, հիւսիսային՝ երկարազուլիս, չէկ ու կապուտաչուի, եւ հարաւային՝ կարճազուլիս եւ թուխ (հեր եւ աչք): Եթէ մին կամ միւսը միայն էր նախնականը՝ միւսը բնիկ արեւական պիտի չ'ըլլայ, այլ յետոյ «արեւականացեալ»: Բնական էր անշուշտ որ թէ՛ հին եւ թէ՛ նոր գիտնոց շատերը²⁶ բնիկ հնդկերկեր. ընդունին միայն հիւսիսային՝ երկարազուլիս եւ խարտեաչ, իսկ հիւսիսային տիպարը նախնաբար մասամբ Արիւրկէէ եկած եւ մասամբ նման թուխ տիպար մ'ալ («մոն-գոլանման») Ասիայէ, եւ առնոց՝ հիւսիսականին հետ խառնուրդէն են արդի այն Հնդկերկերոպականը յետոպա եւ յԱսիա: Մինչեւ անգամ նախաւոր ժողովուրդն Թիններու ազգակից հնագոյն խաւէ գնոցներ կան, որոնք լիովին խարտեաչ են: Այս իրաց մէջ դիւրին է չափազանցել, եւ անոր համար վերջուով («Նախաժողովուրդ Եւրոպայոց» եւն. գրութեամբք) շատ լաւ շեշտեց այսպիսեաց սխալմունքները, եւ կը բաւէ յիշել որ միայն Իտալիոյ մէջ հիւսիսայինը կարճազուլիս են՝ բայց չէկ (նոյնպէս Ալբանացիք եւն) հարաւային՝ երկարազուլիս, բայց թուխ: Թողունք Տէյ-լորի²⁷ եւ այլոց գրութիւնն՝ որոնք ճիշդ հակառակը՝ կարճազուլիսները բնիկ-արեւական կ'ընդունին, երկարազուլիսները՝ օտար, անո՞վ որ իրապէս երկարազուլիս են օտար սոսմերը (Քամեանք ալ եւն): Յեղերու այս

խնդիրը բնական է որ կայ նոյնպէս Փոքր-Ասիոյ եւ Արեւելից հին ու նոր սոսմերու համար, ինչպէս քիչ մ'ետքը պիտի ակնարկենք: Ուստի թողովուրդ այս նախազգային խնդիրները, առնունք պարզ ազգային խնդիր մը: Զարեհի ծովական թագաւորութեան մաս կը յիշէ Ստրաբոն (տես յետոյ) «Ողորմանտիս» երկիր մը (կայ ուղղագրութիւնս ալ՝ Ողորմանտիս): Տեղը բոլորովին ճշգրտել չենք կրնար, իսկ ժողովուրդեան մասին Տոմաչէկ (Թրակացիք, էջ 408 եւն) այն կարծիքը կը յայտնէ թէ՛ նկատելով անուան լիակատար նոյնութիւնը՝ թրակեան Ողորմանտիսը հետ (հմմտ. Ὀδομαντος եւ Ὀδομαντις) թէ կ'ամ շատ կանուխ՝ «փոխաբերական ցեղերու առջեւէն՝ որոնք անցան Բոսպորն, Հայոց ետեւէն երթալով՝ յառաջացած ըլլան Ողորմանտիսը ձեռնարկու խումբ մ'որ իւր անուամբ կ'ընէր Անտիդաւրոսի մէկ գաւառը»:

— Կ'ամ «Ողորմանտք արշաւակից եղած էին Տրերներու կամ Տրաղղեանց, բայց Կիմերեանց արշաւանաց ժամանակ ջրուցան դէպ ի արեւելքի այս խորքը»: Ասի ըստ ինքեան լաւ մեկնութիւն մը կ'երեւայ, եւ թերեւս իրօք լաւագոյնն է: Բայց արդ ճիշդ այս տեղեր, «Տաւրոսի լեռան կողերուն վրայ» ինչպէս տակաւին Գէորդ Կիպրացի գիտէ «երկու ժողովուրդ, որոնց մին կը կոչուի Խութեցիք եւ միւսի Սանասունք», նոյն միջոցին Ասորիք գիտեն եւ կը յիշեն ճիշդ Հանձիթի մէջ Ուրտիցի ժողովուրդ մը (ասոր. Urtâyê, յն. Ὀρταίοι), ուստի «Ուրտ» ժողովուրդ մը, որուն համար բացայայտ կ'ըսուի թէ հայերէնէ եւ ասորերէնէ բոլորովին տարբեր լիցու մը կը խօսէր տակաւին այն ատեն: Աւելի ուշ ալ՝ եւ աւելի անդին՝ Արարացիք կը յիշեն Խութի մէջ (գորոնք նաեւ Թովմ. Արծրունի, Պամ. Ե., է շատ «խրթին» կը գտնէր եւ կը համարէր «գոնահաք Ասորւոց», որոնք Աղբամեղեայ եւ Սանասարեայ հետ եկած ըլլան, ուստի «Սանասայք» կ'անուանուին եւն) կը յիշեն «Խութեցի» (գրուած «Սովայթ-եցի») բարբարոս ժողովուրդ մը՝ բնակած լեռնագաւառի մը մէջ՝ որ կը կոչուէր Էլ-Արբուն, զոր նէոլոսիկէ լաւ եւս կը կարդայ Էլ-Արբայ (= ասոր. Ortâyê). Տոմաչէկ («Սասուն եւ Տիգրիս աղբերաց սահմանները եւն. թրգմ. Հ. Բառն. Պիլէգիկձեան, Վիեննա 1896, էջ 12, 28—29 եւն) միայն տարակուսական կը գտնէ թէ Հանձիթի «արամայցի» Արարացիք մինչեւ Տարոն ու Բաղիշու կող-

²⁶ Հմմտ. ի միջի այլոց Th. Poesche «Արեք», Ենա 1878: K. Penka, «Մագուսն Արեայ», 1884 եւն: ²⁷ Taylor, «Մագուսն Արեայոց», Լոնտոն 1892:



1732-71

մերը կրնային տարածուած ըլլալ եւն: Ինչ ալ ըլլայ Չ., եւ նաեւ Ժ. դարուն կային Ուրտացիք կամ Որտացիք՝ ինքնուրոյն լեզուաւ, զոր չէին հասկընար Հայք եւ Ասորիք եւ սորվել ստիպուած էին (հմմտ. Nöldeke, ի ZDMG, XXXIII, 163 ff.) հետեւաբար ո՛չ հայ էին եւ ո՛չ արամէացի ցեղով, թէեւ յետոյ հայացած ու ասորացած, բայց թերեւս աւելի քրդացած ըլլան²⁸: Զիարդ եւ է, արդէն Ենաչն այս Որտացիք կը կայէր հին Ուրարտուի բնակչաց հետ, զոր Հիւրշման (անդ) «չատ անապահով» կը գտնէ: Բայց այժմ նաեւ Մարքուարտ²⁹ ուղղակի մնացորդ կ'ըսէ հին Ուրարտեանց պետութենէ ետքը ցրուած՝ Հայոց մտնելով՝ նախկին տիրող ժողովուրդեան եւ անունը հետեւապէս հին Ուրարտու անուան համաօտում մը՝ Որտ-, ինչպէս այս Ասորեստ. «Ուրարտու», Գարեհի բարեւական «Ուրաշտու» (ուղղելի Ուրաշտու) ունի ձեւերը ալ, երբ. «Արարատ» եւ (Հերոզ., Գ. 94, է. 79), «Արարտ-ը» եւ ի վերջոյ հայ՝ Այրարատ: Այժմ Կարստ (անդ՝ 411) կը վճռէ՝ այս տակաւին Ժ. դարու ապրող Որտացիք միայն «սուսմերեան-ակկատեան ցեղէ կրնան ըլլալ», եւ այնիպիսի տեղ մը (Անձիտ, Սասուն, Խոյթ), ուր Սանասարի գրոցի ասպարէզն է՝ «որ հարաւային եւ հիւսիսային Խաղու Սուսմերացւոց փոփոխ յարաբերութիւնքը» կը նկարագրէ: Այս տեղ այժմ կը բնակին նաեւ Քրդեր, եւ անոր համար Կարստ (անդ) նաեւ քրտերէնի մէջ «սուսմերեան-ակկատեան հետքեր» կը գտնէ, եւ կը հետեցընէ՝ թէ արդի «Քրդերը խառնուրդ ժողովուրդ մըն են՝ բուն քարտ կամ երանեան ժողովուրդեան խառնուրդով անդրեմածին սուսմերեան ակկատեան նախաժողովորդեան հետ»: Արդ պարզ հարցում մը. երանեան տարրն ուրեմն Նախաքուրդերը վերջապէս «քուրտ» ըրաւ հոս: Իսկ ի՞նչ տարր արդեօք «Նախահայերն» ալ «հայ» ըրաւ վերջապէս — թողունք ուրիշ տեղեր — նոյն իսկ հոս, այն Հայերը որոնք Չ.—Ժ. դարուն ալ (Կարծենք անկէ այսօր «Հայերէնը» կայէս նոյն մնացած է) չէին հասկընար այն «Որտացիք»՝ նախկին սուսմեր-ակկատեան, ըստ Կարստի՝ նոյն իսկ իրենց Հայոց հին լեզուն: Զէին կրնար ալ ո՛չ «Պեղատառ»

Հատեանք»՝ քանի որ ճիշդ Հայերէնն ալ ասոնց շարքէն էր՝ ըստ Կարստի, հետեւաբար ո՛չ ամբողջ «միջերկրեայ-անատոլեան» խումբը: Ուզենք չուզենք՝ ըստ իւր իսկ բացատրութեան «ուրալակերպ Հնդկերգերմանական» տարր մը՝ Արիք վերջապէս մաս ունենալու են հոս ալ: Կ'ենթադրենք թէ Կարստի ալ միտքը չէ ժխտել որեւէ հնդերոպական հայ տարր. միայն թէ այն ատեն չենք հասկընար՝ թողունք վերջին եզրակացութեանց բանաձեւերը՝ այն ընդդիմութիւն զոր ունի հայերէնի «հնդերոպականութեան» դէմ ընդհանրապէս, եւ գործնականը մասնաւորապէս, շատոնց եւ շատ լաւ մեկնուած անթիւ բառեր խառնուման համեմատելով որեւէ — թողունք շատ ջուր վերցընող «աքթատեանք» — մոնղոլեան-թաթարական բառի մը հետ, մինչեւ ճարտներէնի, թէեւ նմանութիւնն ըլլայ հազիւ այնչափ՝ որով որեւէ լեզուի հետ համեմատել միշտ կարելի է: Եթէ հայ բառերուն շատերը հնդկերոպականէ դժուարաւ («եւ ո՛չ մերձաւորապէս համապար» կը մեկնուին՝ ի՞նչ են այն անթիւ յաճախութիւնն, ուր «մերձաւորապէս» անգամ քիչ մը շատ է՝ նոր համեմատութեանց մէջ, եւ ուր յիշուածներու հին ձեւերն ալ նախ պէտք էին կշռուի: Յամենայն դէպս պէտք էին գոնէ խաւերը բաժնուիլ, եւ «Պեղատառ-Հատեան» կամ ինչ որ ալ ուզուի խաւի կամ խաւերուն հետ չխառնել անխտիր նաեւ իրօք արեւականը, մինչեւ անգամ փոխառութիւնն: Եւ ասի կ'արժէ՝ ինչպէս ակնարկեցինք՝ ո՛չ միայն «ակկատեան» — այլ նաեւ միւս համեմատութեանց համար, եւ ա՛յս է պատճառն որ լեզուագէտք ասոնց վրայ շատ կասկածոտ աչքով կը նային: Հեղինակը կը խոստանայ «Ատլանտիս» երկին մէջ աւելի պարզել իւր տեսութիւնը:

Քանի որ հոս ալ խառնեցինք Քամերէն մինչեւ Ուրալցիները, էրր հետաքրքրութեան համար յիշենք նաեւ Կարայի կարծիքը, ճիշդ ըսելով միայն անոր համար որ համաօտ ամփոփում մը տրուած է նաեւ հայերէն՝ հեղինակի «Պեղատառեանց եւ Հատայ եւ անոնց գաղթականութեան մասին» եւն եւն ընդարձակ գրութիւններէն³⁰: Ըստ այսմ Հայք բուն «Միլի»ներն են կամ բեւեռագրութեանց Ման-

²⁸ Հիւրշման, «Հին Հայոց տեղւոյ անունները», էջ 54—56 եւ մեզ Տէյլորի յիշատակած Բալիկի ցեղէ եւն: ²⁹ J. Marquart, Armenische Streifen, «Յուշարձան», էջ 291—302:

³⁰ Խալ. ի Civiltà Catholica եւն, եւ «Հատր-Պեղատառեանց», Հոտմ 1894. հմմտ. Հ. Ե. Թորոսեան, «Արմենիա անուան ստուգարանութիւնը եւ հայ ազգի ծագումը», ԲՁՄ. 1899—1900:

կուած լեզուախմբի բուն ներկայացուցչին հետ համեմատել, ուրեմն «աքքատեանին» ալ դրուութեան փորձաքարն է նոյն լեզուախմբէ հռչակուած ալաբուտերէնը, եւ ասի պէտք էր նկատի առնուլ արդէն քան իբր հազար տարի ետքը դրուած Հայերէնի այս կամ այն խաւը կամ ամբողջը, մինչեւ անգամ նորերը՝ «կոճակ»է մինչեւ «քիչ» ու «սափրել» եւ նմաններ: Իսկ ի՞նչ ըսելու է բեւեռագրութեանց Արծաթի եւ Մխտանի լեզուներու մասին (Հատեանը թողունք իբր խնդրական), ճշգրի այս կարգէն՝ այսինքն «միջերկրեայ-անատոլեան» = պեղասոգահատեան կամ իբեր-ալաբուտեան» շրջանին մէջ, պատկառելի ալ հնութեամբ (ժԵ. դար Ն. Ք.) ուստի ամէնէն աւելի մեկնելի «ակկադեան» երէնէ, եթէ հնար է: Թէ՛ ասոնց եւ թէ՛ Ելամականին լուծման աշխատողները շատ են այսօր, ամէն տեսակէտով, նաեւ «տուրանեան» եւն, թէ՛ եւ տիրող տեսակէտն ըլլայ ընդհանրապէս «ոչ հնդիկեւր. եւ ո՛չ սեմական»: Բայց՝ օրինակի համար Արծաթի լեզուն (Արգաբա, Արգաւա եւն) այնպիսի նշմարանքներ ունի՝ որ իբր հնդիկեւրոպական պաշտպանողներ ալ եղած են, եւ օրինակի համար Հ. Պետերսըն («Արգաւայ-թղթոց մասին» ի IF, Anz. XV, 3) նոյն կարծիքը հաւանական կը գտնէ:

*

Այս լեզուաց լուծման խնդիրն է կարծենք կարեւորագոյնը՝ հնութեան մասին նաեւ Եփրատի երկու ափանց ազգերու դրեց համար: Մարդախօսօրէն ասոնք շատ աւելի հին տարածուած ցեղէ մ'ազդուած ըլլալ կը թուին, այնպէս որ նաեւ կազմախօսօրէն նոյն՝ ասոնց սակայն արդէն բեւեռագրական այն շրջանին նոյն ազգերն ըլլալու՝ ինչպէս լեզուները չեն: Անոր համար՝ որչափ ալ մարդախօսական տեսակէտը տարբեր է լեզուագիտականէ, արդիւնքներն ալ կրնան մինչեւ անգամ հակառակ երեւալ, սակայն ազգագրական տեսակէտով պէտք է այս իրերը լուսաբանել՝ մանաւանդ մտադիր ըլլալով ազգի մը դաղթմանց, չիմանց եւ կրած ազդեցութեանց՝ շատ կամ քիչ: Բուն մարդախօսական տեսակէտը, ինչպէս կը գրէ՝ ցայժմ եղած քննութեանց արդիւնքները Փոքր-Ասիոյ համար ամփոփելով Յիմմերէր («Փոքրասիոյ բնակչութիւնը, Միւնխէն 1898, գերմ.») ա՛յն է թէ մինչեւ անգամ Արիք կամ Հնդիկեւրոպականը միաբուն լեզուաց գերդաստան մըն է եւ ո՛չ գերդաստան մը միաբուն ազգաց կամ Արեւայ

ցեղ մը: Այսօր իսկ, կ'ըսէ, նոյն Փոքր-Ասիոյ մէջ Օսմանեանց իշխանութեան ներքեւ կ'ապրին իբր Թուրք-Թաթար՝ նոյն լեզուն ալ առած բայց իբրեւ ցեղ չափազանց քիչ է իրապէս մոնկոլիան տոհմէ եղածներուն թիւը. իսկ կրօնից կողմանէ՝ այս ամէնքը մահմետական ըլլալով ալ՝ արաբացի չեն: Այս տեսակէտը յամենայն դէպս կ'արժէ միշտ աչքի առջեւ ունենալ այս «փոքրասիական խնդրոց» համար, եւ անոր համար նոյնը կ'արժէ նաեւ Հայոց մասին, որոնց մարդախօսական կազմը շատ հետաքրքրած է մարդախօսներն եւ անոր յատկապէս շատ որոշ «կարճագլուխ» տիպարը թէ՛ շատ հին էր եւ շատ տարածուած եւ թէ՛ նաեւ այսօր նոյնպէս տարածուած է բազմալեզու եւ բազմազգի ազգաց մէջ: Այս մասին չափազանց հետաքրքիր են մարդախօսական քննութիւնքն, որոնց մէջ մեծ տեղ մը կը գրաւէ Է. Շանդըր՝ որը յիշեցինք եւ որ բազմաթիւ երկեր ունի՝ չափելով ալ հազարաւորներ թէ՛ Կաւկաս թէ՛ Հայաստան եւ թէ՛ Փոքրասիոյ մէջ, առանձնապէս Գամիրը, որոնց հին յիշատակարանաց ալ հետախոյզ եղած է³⁸: Մեզի համար կը բաւէ քննութեանց սա արդիւնքը, թէ այսօր Օսմանցի կոչուած թուրք ժողովուրդը՝ յատկապէս Գամրաց մէջ, կազմուած ալ գանազան ցեղերէ եւ դաղթականներէ, նոյնպէս այսօր Յոյն կոչուածները, ամենազոյցն մասամբ իբր թուրք կամ յոյն են, թէ՛ եւ նոյն ազգաց լեզուն ու կրօնք ընդունած՝ ձուլուած են. այլ թէ ասոնք ամենամեծ մասամբ տոգորուած ու թաթարած են «հայ տարրներէ, պեղասոգեան, նախակապաղովկեան կամ հատեան հնագոյն ազգաց մնացորդներէ»: Ուստի տիրողն է այն հին տիպարը՝ մեծաւ մասամբ կարճագլուխ: Փոքրասիական երկրորդ քննիչ մը՝ Լուչան՝ քննած է ու չափած նոյնպէս յիսուն հազարէ աւելի անձինք եւ դարձեալ պեղմանց արդիւնքներն աչքի առջեւ ունենա-

³⁸ Օրինակ «Մարդախօսական Հետազոտութիւնք ի Կաւկաս», Ա. Գ., Լիոն 1885—1887. «Մարդախօսական Հետազոտութիւնք արեւմ. Ասիոյ մէջ», Պարիս 1895. «Մարդախօսական Հետազոտութիւնք եւն ի Գամիր», Պարիս 1899. մանաւանդ Հասոց յիշատակարանաց եւն մասին ի Nouv. Archives des Miss. scient. et litt., Պարիս 1897 եւն. նաեւ «Հայեր, պատմական եւ մարդախօսական համառոտ տեսութիւն» ի «Bull. soc. d'anthrop.», Լիոն, XV, 1896, էջ 49—101 եւն եւն. բացի Բամաջեանի տեղեկատուութիւնէն՝ ԲՆՍ, Ա., 2, յատկապէս ուղեգրականը ալ հայերէնի վերածուած են բազմաթիւ հմտ. «Ուղեգրութիւն Շանդըրի յարեւելք», ԲՉՄ, 1894—1896. նոյնպէս տիկնոջը՝ Բ. Շանդըր, «Ընդ Հայաստան Ռուսիոյ» միասին, Պարիս 1893 եւն՝ ԲՉՄ, 1891—1893. եւ ուրիշ տեղեկատուութիւնք ալ:

լով՝ իւր այլեւայլ երկոց մէջ այն եղրակացութեան կու գայ թէ նոյն իսկ բուն «փոքրասիական» կոչուած Լիւկիական ափանց եւն ժողովուրդը՝ հնուց ինչպէս այսօր՝ երկու ցեղ կը ցուցնէ, «երկարագլուխ» մը՝ որ Սեմական տիպար է, եւ միայն մասամբ նաեւ յունական տիպարով. եւ ուրիշ մը՝ ճնշող մեծամասնութեամբ՝ կարճագլուխ, եւ այն՝ մինչեւ անգամ չափազանց կարճագլուխ՝ ճշգրի նման արդի հայ տիպարին, որ դարերէ վեր այս մասին համազգի եղած է: Այս պատճառաւ ալ ինքը կ'ընդունի թէ Փոքր-ասիոյ եւ Հայաստանի (եւ Կաւկասի եւն) այս հին ցեղն ուրոյն տոհմ մը հաշուել, զոր ինքը հայակերպ (arménoid) կամ նախահայ (proto-arménisch) կը կոչէ³⁹: Ուստի նաեւ նշանաւոր Ռ. Վիրխով նոյն կարծիքն ունէր, եւ նոյն տոհմը նաեւ ուղղակի «հայաստամ» կրնար անուանել: Իւր բազմաթիւ գործոց մէջ նոյն կարճագլուխ տիպարը կը դոնէր Հիսարլուի պեղմանց մէջ, որոնց գործակից էր Շլեման⁴⁰: Վիրխով բաց աստի ընդհանրապէս կը գրէր թէ ամբողջ Կովկասի մէջ իրեն չէ յաջողած գտնել գոնէ մէկ հատ իբրք երկարագլուխ ցեղ. ամէնքը կարճագլուխ են՝ աւելի կամ քիչ, ոմանք ծայրայեղ՝ որոնց կարգէն են նաեւ Երանեան Օսեոները, ի հարկէ նոյնպէս կարճագլուխ են նաեւ Եւրոպիոյ յատկապէս լեոնակողմերը՝ Ալբանացիք, Տիրուլցիք, Հելլենացիք⁴¹ եւն:

Քանի որ այսչափ կարեւորութիւն կը տրուի հայ տիպարին՝ յիշենք թէ յատկապէս Կովկասեան հայ գին. բայց չափմանց (Պանդիւխով 1892. Տիւրանովիչ 1897) արդիւնքները գեղեցիկ կերպով եւ համառօտ ամփոփած է Գ. Ն. Անուշին՝ որ հայերէն ալ երեւցաւ⁴²: Ըստ այսմ՝ Հայոց մէջ երկու տիպար խտնուած կ'երեւայ, մին՝ միջին եւ նաեւ ցած հասակաւ (1638—1665 mm) եւ միւսը՝

³⁹ Հմտ. Լուչան եւ Պետերսըն, «Ուղեգրութիւն ի Լիւկիա» եւն. Վիեննա 1889, գերմ. «Քաղաքացիներ եւ ուրիշ մնացորդներ Լիւկիոյ հին բնակչութեան» ի Archiv f. Anthrop., 1890, p. 31 եւն. Լուչան եւ գարձալ Ռ. Վիրխով ի «Corr.-Bl.», Գերմ. Մարդախ. Ընկ., 1892, Թ. 9 եւն եւն:

⁴⁰ Վիրխով, «Նպաստը աշխարհագրութեան Տրոյոյ», Պերլին 1879. «Հին տրոյական գերեզմաններ եւ գանդեր», 1882. «Ասոսի եւ Կիպրոսի գանդերու մասին», 1882 եւն եւն. հմտ. Corr.-Bl. Գերմ. Մարդ. Ընկ., 1892, էջ 101 եւն:

⁴¹ Հմտ. նաեւ Ռ. Վիրխով, «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ», թրգմ. Լ. Բարայեան, «Ազգ. Հանդ.», Ա., էջ 50 եւն:

⁴² «Երկարական Օղնութիւն», Բ. Տղ., Մոսկ. 1898, ռուս., թարգմ. Մ. Շովբեան, ԱՐՄՏ, 1899 եւ էջմ., էջ 36:

բարձր (1665—1692 mm): Կարեւոր կէտն է սակայն իրենց խիստ կարճագլուխ ըլլալը յայտարար՝ ըստ Շանդըրի 85,5, Պանդիւխով 85,7. բայց Տիւրանովիչ՝ 86,9. ճակատը ուղիղ ու լայն՝ միջակ բարձր, քիթ՝ մեծ, երկար եւ լայն, յաճախ կոտմնիկ, բայց երկարութիւնը շատ անգամ «նրբաքիթ» կ'երեւցընէ: Աչքի եւ մազերու գոյնը մեծաւ մասամբ թուի (բուն խիստ սեւ ալ կայ), կապոյտ ու խարտեաչ՝ քիչ. երեսի գոյնը սպիտակ՝ քիչ մը թխորակ:

Երբ ամբողջ Փոքր-Ասիայէ մինչեւ Կաւկաս կարճագլուխներու վրայ կը խօսուի՝ բնական է կ'առնուի հասկնալ գանդի կազմուածը, ո՛չ միւս ամէն մանրամասնութիւնք, թէ՛ եւ ընդհանրապէս շատ մերձաւոր ըլլան ամէնքը: Այս կարճագլուխ տիպարին կը վերաբերէին նաեւ Հատք, ինչպէս այսօր կ'ընդունին շատերը: Թէ՛ եւ կան պէտքս կարծիքներ ալ, նաեւ Քամեան գնող, ինչպէս արամէական եւն: Ասոնց տիպարը Եգիպտացոց քանդակներու մեծ շատ կը գանազանուի միւսներէ, յատկապէս Սեմականներէն, եւ կ'երեւայ դարձեալ իրենց՝ Գամրաց եւ Հիւսիս-Ասորոց եւն աշխարհաց մէջ տարածուած քանդակներու վրայ: Եգիպտականը շատ ալ հին են (ժԵ. Ն. Ք. դարէ եւ աւելի իսկ): Յատուկ նկարագիր մըն է որ ասոնք գրեթէ միշտ անմորուս են, երկարահեր՝ բուրբաճեւ յարգարուած գլխուն չորս կողմ, բայց դէս ցցուած գլխին մինչեւ ուս: Իրենց կազմածները, յատկապէս «Ամագոնաց» կոչուած ասպարը, սրածայր կօշիկ՝ խրացաւոր, այնպէս ինչպէս հինք կը նկարագրեն Կաւկասեանքը եւն: Ազգագրական տիպարն ալ՝ ինչպէս իրենց քանդակաց՝ նոյնպէս Եգիպտականաց վրայ որոշ տարբեր են Սեմականներէ. քիթ երկար եւ քիչ մը կոր. ճակատ ուղիղ՝ բայց դէպ եւ քաշուած, յատկապէս այտոսկրը թանձր. կզակ կարճ ու բոլոր. երեսի գոյնը պայծառ՝ քանդակները գանդը Սեմականներէն աւելի ճերմակ ցուցնելու ճիգ ունին, այնպէս որ կարծես ապագայ Գամիրը «Ապիտակ Ասորիք» կոչելու Յունաց սովորութիւնը հին հիմ մ'ունի: Արդ այս տիպարը նոյն կը գտնէ Լուչան թէ՛ Սէնջիլիլի հատեան քանդակաց մէջ, թէ՛ պեղմանց ատեն գտնուած գանդերու եւ վերջապէս նոյն իսկ այսօրայ բնակչութեան վրայ՝ որ մնացորդ է հին Փոքրասիոյ հին ժողովուրդներէն, եւ որով այս ալ կը հաշուէ այն

նախակապողովկեան կամ հայակերպ տիպարէն: Ի վերջոյ չմոռնանք որ շատ աւելի հեռուն՝ Տէլլոյի (Հարաւային Բարեխառան) մէջ գտնուած քանդակներն ու արձանազուլները, զորոնք Հոմմէլ մինչեւ Լ.—Ս. դար հին կը դնէ (Ն. Ք.) երկու տիպար նոյնպէս կ'երեւայ: Մին երկարազուլն՝ խիտ սեւաթոյր եւ երկայն մօրուօք կզակի վրայ սեմական Բարեխառոց եւ յետոյ Ասորեստանցոց է: Միւրը՝ աւելի բոլորչի զուլի մ'ունի, միշտ առանց մօրուօք եւ քիչ մը դուրս ցցուած ծնօտով: Հոմմէլ այս վերջինը կը կոչէ Սուսերական-Ալարտեան: Լուշան այս տոհմը նոյն կը գտնէ Հատաց տիպարին հետ, ուստի Հոմմէլի «Ալարտեանն» է՝ զոր ինքը նախակապողովկեան կը կոչէ, եւ այս տոհմին կցելու ենք հնոց Պեղատեան կոչածն ալ: Յիմմերէր կ'աւելցընէ թէ գտնէ Հատաց եւ այլ ազգաց եւ Հայոց տիպարի նոյնութիւնը՝ չհաշուելով մանր տարբերութիւնքը, աչքի զարկած էր արդէն ուրիշ գիտնոց ալ (հմմտ. Հիւրշֆելտ, «Վիմափոր դամբանք Պափղագորնիոյ», 1885, «Քանդակք ի Փոքր-Ասիա եւ Հատք», 1887 եւն), եւ այժմ աւելի կը հաստատուի Ենսէնի գիւտով՝ որ Հատերը կ'ապացուցանէ իբր Հին-Հայեր, որոնք սակայն շատ մեծ ալ ազդեցութիւն կրած են եւ խառնուրդներ ունեցած յատկապէս Սեմականաց հետ՝ ի Հիւսիսային Ասորիս, եւ արդէն Սէնշիլիի Հատեան մեծագործ քանդակաց կցուած են հին-արամէական արձանագրութիւնք:

Վերջապէս նոյն արդիւնք կու տան գրեթէ ամէն մարդաչափական քննութիւնք, նոյն իսկ այն տեղերն՝ որոնք յունական դադթականութիւն էին: Վերելով Տրոյեան դամբանաց քննութեան մէջ կը գտնէր Յունաց դադթականաց սեպհական տիպարը մինչեւ Ն. դար (Ն. Ք.) եւ յետոյ կը սկսին խառնուիլ կարճազուլի տարերք, որոնք ուրեմն կամ թրակիայէն եկան կամ չըջակաց բնիկներն էին (ըստ Լուշանի): Կերասոնի արդի Յունաց իսկ քննութիւնը կը ցուցնէ նախ միջին-կարճազուլի մը եւ նրբաքիթ, որ յունականն է, ուրիշ մը՝ խիտ-կարճազուլի եւ լայնաքիթ, որ բնիկ ժողովուրդը պիտի ըլլայ (Ա. Նէոփիտոս, որ վերջինս Ասորեստ-Քաղզէական կը կարծէ), եւ յետոյ յունախօս եղած է: — Ամէնէն աւելի կարեւոր կէտն է՝ այս կարճազուլի տիպարին ազդեցութիւնը նաեւ Սեմականաց վրայ: Բուն սեմական Ասորոց եւ

Ասորեստանեաց տիպարը տարբեր է. բայց թէ՛ հնութեան մէջ եւ թէ՛ այսօր այն ժողովրդենէ մնացորդաց մէջ յաճախազէպ է այն տիպարը, ուստի նոյն ազդեցութիւնը կրած էին Արամէացիք, Հրեայք եւն: — Ամէնէն աւելի աչքի զարկած է նաեւ արդի Հրէից միւս Սեմականներէն տարբեր եւ աւելի Փոքր-Ասիոյ ժողովրդոց նմանող տիպարը: Լուշան (Մարգախ. Ընկ. Գերմ., 1892, էջ 94 եւն) կը մեկնէ թէ ասի հին Երրայեցոց տիպարը չէ, այլ ծագած է խառնուրդէ օտար ազդերու եւ յատկապէս այն նախակապողովկեանց հետ (հմմտ. «Քեաացիք», Մն. զլ. Ի. Գ. եւն). եւ արդի Հրէից խարտեաչները նախասեմական Ամովհրացիներէ մնացորդ ըլլալու են:

Կը թողունք ուրիշ մանրամասնութիւնքն, եւ դարձեալ այն խնդիրը թէ այս փոքրասիական կարճազուլիքը բնի՞ կ էր թէ գաղթական: Լուշանի գրութեան էական մէկ կէտն է թէ ա՛յս էր այս ամէն աշխարհաց նախաւոր խաւը՝ ցորչափ կրնանք գիտնալ. իսկ յատկապէս երկարազուլի Սեմականք յետոյ մտան եւ սփռեցան չորս կողմ: Քամեան տեսութեան պաշտպանք այլազգ կը նկատեն իրերը թէ՛ հոս թէ՛ Եւրոպա: Այսպէս նաեւ Սերջի («Ծագումն եւ տարածումն Միջերկրեայ ցեղի», գերմ. թրգմ. Բիհան, Լայպցիգ 1897) երկարազուլի Քամեանքը կը դնէ («Միջերկրեայ ազգատոհմը» վասն զի տարածուած էր նաեւ Միջերկրականի արևունքը) իրապէս նախաւոր ժողովուրդը, որմէ են ինչպէս Երկրպտացիք եւ անիլիկեան ուրիշ տոհմեր, նոյնպէս ամէն հին ազգերն թէ՛ յԱսորիս թէ՛ Փոքր-Ասիոյ մէջ եւ թէ՛ յԵւրոպա, ելած Նեղոսի ազդերակունքէն եւ սփռուած աշխարհիս վրայ, հիմ գնելով ինչպէս Երկրպտոսի նոյնպէս միւս հնագոյն ազգաց եւ պետութեանց եւ առհասարակ քաղաքակրթութեան: Հետեւութիւնը պիտի ըլլայ թէ կարճազուլի տոհմը յետոյ եկաւ եւ տիրեց՝ խառնուելով ալ, ինչպէս յատկապէս Արիք, որոնց բուն տիպարն էր, կ'ըսէ, կարճազուլիք: Ասի արդէն կապուելի նախարիական տիպարի խնդրոց հետ՝ զոր վերն ակնարկեցինք. ուստի կը թողունք:

Ի՞նչ կը հետեւի յատկապէս Հայոց համար այս ամէնէն: Պարզապէս այն որ Հայք ալ մարմնակաղմութեամբ կը վերաբերին այս շատ տարածուած կարճազուլի ցեղին, որուն կը վերաբերին հարաւային Եւրոպականներէ

մինչեւ երանեան Օսետքն, եւ ամբողջ Փոքր-Ասիոյ հին ժողովուրդները, ինչ ալ լեզու ու տոհմ ըլլան: Ուստի Հայք արդէն «կարճազուլի» կրնային զալ նոյն իսկ Եւրոպայէ, նախնարար թէ ազդուած, յամենայն դէպս նոյնը պիտի ըլլային՝ այլոց պէս՝ գտնէ ազդուելով Փոքուն-Ասիոյ մէջ, ըլլան փոխապատճառ թէ ոչ: Եթէ Հատք՝ ըստ Ենսէնեան գրութեան՝ Հին-Հայեր էին, արդէն հոն յամենայն դէպս «հայացած» էին մարմնակաղմութեամբ ալ: Ենսէն մտաւոր կ'ընէ թէ այս մարդակաղմական տեսութիւններէն պէտք չէ մեծ հետեւութիւններ հանել: Եթէ ընդհանրապէս կ'ընդունինք թէ Պիւրենեաններէ մինչեւ Հնդկաստան տարածուած էր ոչ-սեմական տոհմը, միախառն թէ արդէն ոչ, Սեմականաց զրացի, բնական էր որ մշուշոտ հնութեան մէջ իսկ, երբ Սեմականք յառաջ խաղացին, եղաւ խառնուրդներ, եւ Սեմականք ընդունեցան իսկ անոնց տիպարը: Այս եւ նման խառնուրդներ շատոնց կային, նաեւ երբ Հատք մտան Հատէ կոչուած աշխարհը, եւ այս երկցեղ խառնուրդ ժողովրդոց հետ բնականապէս խառնուեցան իրենք ալ: Անոր համար իրենց տիպարին մէջ ալ պէտքիսութիւն կայ. եթէ, կ'ըսէ, իրենց քիթն ընդհանրապէս «կոտմնիկ» է, կայ նաեւ ուղիղը (Ջերարիս, Ա., 2) եւն եւն: Ի վերջոյ ամենեւին անտեսելու չէ որ Հայք մտած են Ուրարտեանց երկիրը, եւ հոն իսկ կրնային իրենց արդի տիպարն առնուլ՝ ուրեմն նաեւ շատ աւելի ուշ: Իրապէս մեր պատմութեան կարեւորագոյն կէտն է նախահայոց կամ Ուրարտեանց — եւ այն պետութեան մէջ գտնուած ազդերու խնդիրը: Եթէ Հայք միայն եւ առաջին անգամ Կիմմերեանց հետ մտան Հայաստան, իրենց զլխաւոր հոսանքն արեւելքէ ըլլալու է: Եթէ անսանք Հոմմէլի (Մարգախ. Ընկ. Գերմ., 1898, Թ. 2 եւ այլուր) այս Կիմմերացիք, որ Կովկասի գտնեքէ խուժեցին դէպ ի Ասորեստանեայց կալուածները, Տուրանեանք էին, որոնք զզրկեցին Ասորեստանի զօրութիւնը, եւ ասի ու յետոյ եկած Ծակաց կամ Սկիւթացոց արշաւանքն ալ պատճառ եղաւ Մարաց զօրանալու եւ ընդհանրապէս երանեանց պատմութեան մէջ երեւնալու: Հայք ալ մտան, կ'ըսէ Ուրարտեանց երկիրը, բայց ինչպէս տուին իրենց հնդիկեր. լեզուն եւ որչափ ալ մեծ ազդեցութիւն ունեցան, բուն Ուրարտեանքն են արդի Հայք՝ ընդու-

նած այն եկաւորներու լեզուն, ուստի նաեւ «Արմէնիա» ըլլայ «Արամ» հին Ուրարտեանց ալ անունէն, ալարտեան -նի մասնիով: Կամ նման կարծիք կամ գտնէ կարելիութիւն եւ հաւանականութիւն իսկ կը յայտնեն ուրիշ գիտնականք ալ (նաեւ Մայէր, Վինկլէր եւն): Ասի կը յիշենք ո՛չ թէ իբր ապացուցուած, բայց յամենայն դէպս արեւմտեան դադթականութեան հետ՝ աչքի առջեւ ունենալու է միւս ուղղութիւնքն ալ: Եւ դարձեալ չմոռնանք որ Հայք վերջապէս բունելով Ուրարտեանց ընդարձակ աշխարհը՝ հոն գտան եւ ձուլեցին կամ ձուլուեցան այն ազգաց հետ նաեւ — եթէ արեւելքէն գային եւ որեւէ կապ չունենային Հատաց հետ — նոյն իսկ այն Հատեանց հետ՝ որոնք Եփրատէն արեւելք տարածուած էին շատ կանուխէն, ինչպէս արձանագրութիւնք կը ցուցնեն: Ուստի իրենց տիպարը լիովին կրնային ստանալ նաեւ միայն Ուրարտուի մէջ: Իսկ «Արմէն» անունն ծանրակշուրթիւն չի տար նաեւ Ենսէն, ուրեմն արեւմտեան շարժման բուն պաշտպանք, քանի որ, կ'ըսէ, այս անունը Մարաց կամ նաեւ միայն Պարսից տուածն է, որոնցմէ առած են Յոյնք, եւ կրնայ նոյն իսկ կապ չունենալ բուն երկրին հետ: Այլեւայլ արձանագրութեանց մէջ (տես «Հատք եւ Հայք», էջ 14—15) կը յիշուին Arman կամ Armin, ուրիշ արձանագրի մէջ Almaan աշխարհ, Տիգրիսի եւ Չոպրոս լեռանց միջեւ, կամ նաեւ լեռանց մէջ, եւ ասի ըլլալով ճամբան Ծօշէ գեղ ի Հայաստան, կրնար ա՛յս աշխարհին անունը գրուած ըլլալ Հայոց աշխարհին, թերեւս սրովհետեւ այն աշխարհին լեզուն կամ ժողովուրդը նոյն կամ ազգակից էր Ուրարտեանց (կամ նաեւ նորեկ Հայոց): Ուստի, կ'ըսէ, «Արմէն» կրնայ այնպէս ըլլալ՝ ինչպէս Գաղգիացոց զԳերմանացիները «Ալեման» կոչելու եւն: Թէ այսպէս եղած են՝ իրենք, ա՛յն ուրիշ խնդիր է: Կրէ՞ք մի փոխգական գրութեամբ Հայք հետեւինք բերած պիտի ըլլան՝ «Արմէնք» — բայց՝ ինչո՞ւ օտար մնաց այն ատեն: Կէտ մը որոշ է՝ Հայք արեւմուտքէն ալ գալով, թերեւս պէտքէս ուղղութեամբ եւ տոհմերով ալ մտնելով, յերեւան կու գան կարաւակաղմը, եւ յամենայն դէպս եղած են նաեւ Աղիարեանց կողմերը (հմմտ. Գարեհի պատերազմները եւն): Ծատ նշանակալից է որ Լէման (Արձանագրիք Ժ. Գ. Արեւելագիտ. Ժողովոյ), Լայպցն 1904, էջ 136) ճիշդ այս

կողմերը կը նշանակէ Հատեան մեծ քանդակ մ'արձանագրութեամբ (անդ՝ Պտկ. 5) արդի Հերիտ գաւառին մէջ, Արբելա-Ռոստոմուզ ճամբու վրայ, մեծ դեղի մը դիմացը, Բատաս անուն՝ որ շինուած է Ասորեստանեան մեծ «թէլլ»-ի մը վրայ, քանդակուած բարձր ժայռի մը վրայ (Պտկ. 6) : Լէման կը յիշէ Սոլիմուսի (c. 38, 1) խօսքը որ «Կիլիկիան» — յիշատակ մը Հատաց մեծ պետութեան — կ'երկարածդէ նաեւ մինչեւ Մարաստան. Լէման կ'իմանայ զայս յիշատակ մը Հատեանց զաղթականութեանց մինչեւ այս կողմերը, տարբեր խնդիր՝ կամաւ թէ բնադատեալ այն շրջանին, երբ տակնուվրայ եղած էին այս ամէն աշխարհները, եւ երբ փոխարէն Սիլիթական զաղթականութիւն մը կը յիշուի Գամբաց մէջ (Յուստինոս, Բ., 4), եւ երբ Մատիանայիք, նախ Ուրմիոյ լճին ափունքը բնակող ժողովուրդ մը տարածուած ըլլալու էր մինչեւ Ադիւս գետ, ուր գիտէ զերեւնք տակաւին նաեւ Հերոզոտոս, եւ անոր համար նոյն իսկ Թ. Ռայնախ կրնար ասոնց վերադրել Բողադթոյի եւ Հատեան յիշատակարանները եւ Հոմմէլ այս յիշատակարանաց ստեղծողաց եւ Սիլիթացուց մէջ կապ մը մտածել (հմմտ. Գր. Հոմմէլ, «Հատք եւ Սիլիթացիք եւ Երանեանց Պատմութեան մէջ առաջին անգամ երեւան գալը», Պրակ 1898, գերմ. եւ այլուր) : Թողունք որ այս տեսութիւնը հաւանական չէին՝ նոյն իսկ Հ. Վինկլէրի պեղումներէն (1906ին) յտառ, անկէ ետքը տարակոյս չի մնար թէ հոն էր Հատեանց մեծ պետութեան մայրաքաղաքը (իրը ԺԵ. դար Ե. Ք.) : Չիարդ եւ իցէ՛ Լէման մտադիր կ'ընէ կէտ մը՝ հատեան արձանագրութեան խորշի մէջ քանդակուած է՝ Ուրարտեանց արձանագրութեան խորշերու նախորինակաց նման, մինչդեռ բուն Հատեանց քանդակները, ի Գամիբուս եւ շրջակայ աշխարհները տարբեր ստիպ են, եւ ասկէ կը հետեցրնէ թէ այս արձանագրութիւնը քանդակողներն երկար տակն ապրած պիտի ըլլան այն կողմերը՝ որոնք մինչեւ այն ատեն Պարթեան կամ Ուրարտեան էին : Արձանագրութիւնը Լէման կը դնէ ժամանակէ մը՝ երբ այս ամէն կողմանք Մարաց աշխարհին մաս եղած էին : Մեղի համար կարեւորը միակ կէտ մըն էր այս ամէնէն հետեցրնելու եւ ապացուցանելու համար, այն թէ այս բազմաթիւ եւ յաճախ իրարու հակասական տեսութեանց, բմբունանց, հաւանա-

կանութեանց եւ լուկ կարելիութեանց մէջ Հայոց նախապատմական դիրքը կրնայ ներկայացուիլ չափազանց ալ տարբեր կերպարանքներով, եւ թէ ի վերջոյ հայ լեզուի մէջ տեսնուած՝ եթէ կ'ուզուի նաեւ զանազան խաւերն՝ եւ ազդեցութիւնքն, — որոնք չեն պակասած պատմական շրջանին ալ, — նոյնպէս հայ ազգին «փոքրասիական» թէ «սուսերական-այսրոտեան» թէ «նախկապագովկեան» կամ պարզ «հայկերպ» մարմնակազմը, — կրնան մեկնուիլ թէ՛ շատ խոր հնութեան շրջաններէն՝ դարձեալ պէսպէս, եւ թէ նոյն իսկ անագանագոյն՝ Կիմմերեանց նախնութեանց եւ հետեւորդ շրջաններէն, ըլլայ Հայոց տարեբաց գաղութը կանխագոյն թէ նոյն շրջանին, արեւելքէ թէ արեւմուտքէ, մաս մաս թէ միահամուռ, կամ այլապէս : Իրերն այնպէս են որ՝ օրինակի համար՝ Վ. Բէլլը կրնար պէսպէս տեսութիւնքն իրարու խառնելով սա պատկերը դնել՝ բնականադէս ի նիթաղրութեամբք. այսինքն՝ Հայք թէ՛ Թրակացի էին եւ Փոնտացուց ազգակից (Կրէմերեան եւն տեսութիւն) եւ թէ՛ Փոնտիկացի յետոյ անցան Գամիբուս եւ տարածուեցան հին ընդարձակ Կիլիկիան՝ եւ թողուցին այն «Հատեան» յիշատակարանքը (Ենտեանեան տեսութիւն), անկէ ստեղծան Տիգրիսի դաշտակողմանքը (Ամիդ եւն՝ ճիշդ Հատեանց համար ալ, յետոյ «Արմէնեանց» ալ) եւ ասկէ պէս ի հիւսիս եւ հիւսիս-արեւելք շարժելով՝ յետո մղեցին Պարթեանց (Ուրարտեանց) ժողովուրդը եւ տիրեցին Տոսալ-Վանայ, այնպէս որ Ուրարտեանք ստիպուեցան փոխուիլ Երասխայ հովիտը եւ տիրել այն կողմանց՝ ամբողջ զինով Արմաւիր (ճիշդ է Տոսալայ արքայից ուշ տիրելն Երասխայ հովին, յետոյ Ալարտեանք քաջուած են հոն՝ եթէ ոչ աւելի հիւսիս. իսկ Արմաւիր մայրաքաղաք՝ հայկական աւանդութեան համեմատ) : Բայց երբ Հայք Արմաւիրն ալ առին Երասխան անցած՝ Ալարտեանք արեւելակողմէն մտնելով, Պարթեան-Ուրարտեանք ստիպուած էին յետո նահանջել՝ Երասխա գետն ի վեր մինչեւ Կարնոյ աշխարհը, որ տակաւին յետոյ ալ «Պարթեանք» էր (ճիշդ է՝ Պարթեանց երկար ատեն այս կողմերը բռնելը) : Թէ եղած է այսպէս՝ այս ուրիշ խնդիր է, եւ իբր ամբողջութիւնը՝ այս եւ նման կարծեաց համար (հմմտ. Բէլլը, ի Տեղեկագիրս Բերլինի Մարդախ. Ընկ., 1900, էջ 63) կրնար Հիւրեման անհիմն ըսել

(«Հին տեղ.» եւն, էջ 10) : Սակայն այլեւայլ մասերը քիչ շատ այնպէս եղած ըլլալու են կամ կրնան ըլլալ : Ուստի լաւագոյն է տեսնել այժմ թէ գոնէ Ուրարտեանց եւ Ասորեստանեաց բեւեռագիրք ի՛նչ կ'ըսեն Եփրատի ափանց մասին «Կիմմերեանց» շարժումէն յառաջ :

(Շարունակելի) :

ՌԵՏՈՐՆԵԸՑ ԳԵՒԸՌԻ ՎԵՆՔԵՐԸ

(Շարունակուիլուն) :

22. ՆԿԱՐ ԿԱՄ ՆԿԱՐԵՆԱՅ Ս. ՍՍԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Նկար կամ Նկարենայ ⁴¹ Ս. Ստեփանոսի վանքը կը գտնուի Շախուռայ սուրբ Աստուածածնի հարաւային արեւմուտքը, Վանայ ծովի եզերքը, բարձր լեռան մը կողքին : Տաճարը, որ նուիրուած է Ս. Յարութեան եւ սուրբ Ստեփանոսի, անշուք է, իսկ միւս շէնքերը քարուքանդ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1905. հմմտ. նաեւ Հայրենիք, 1887, Թ. 2257 եւ Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 39) : Եղած է անուանի մենաստան եւ ժ.Չ. դարուն ունեցած է մինչեւ 200 անգամ կամ միաբան : Ասկէ է անուանին Գէորդ Վ. Նկարենցի (Անդ) :

Բարեբաւորէն բաւական յիշատակագրութիւններ կան վանքին մասին : Գանձարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք՝ «Գրեցաւ (1401ին) յերկիրս Ռչտունեաց եւ ի հրեշտակարնակ յարգիս, որ կոչի Նկար ընդ հովանեաւ սրբութեանս եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփաննոսին ի հայրապետութեան Տեառն Գաւթի... եւ ի տեղապահութեան սուրբ ուխտիս իմաստուն եւ հեղահոգի տէր Յովհաննէսի, որ կամակիր եղեւ զրկուց սորա մարմնաւոր պիտոյիք եւ այլ ամենայն սպասաւորութեամբ եւ կան բնակեալ յայտ անապատիս բազում կրօնաւորք, այլ եւ զմեծ հոգեւոր զԳրիգոր վարդապետն զուսուցիչն մեր...» (Նոտարք, էջ 14. ուր ծն. 1 կը գրուի՝ «Մեծ ի դիւզն Հին առ ծովեզերք ի հիւսիսային արեւմտեան ծայրն Ռչտունեաց

⁴¹ Նկարէն ըսել է խոտուակի, նախուն. հմմտ. Հանդէս Ամս., 1907, էջ 55 : — Նկարէնի հետ կը նոյնացան Անձ դնապատ եւ Գիւարայն Ս. Յարութիւն. հմմտ. անդ, ուր եւ տեսնել Ստեփանոս Նկարենայ կաթ. :

գաւառին ի մէջ անտառախիտ լեռին Տաւայ պոյնի կոչեցելոյ») : Նոյն Յովհաննէսի մասին էջմիածնի 1520 ձառքնարի յիշատակարանին մէջ կայ՝ «Մանաւանդ տէր Յոհաննիսի Նկարենայ եպիսկոպոսին եւ ստացողաց զրոցս Ստեփաննոսի եւ Թումայի եւ քեր նոյնին Շնոֆորին եւ ծնողաց նոցին Մկրտիչին եւ Գրիգորին՝ Քեոի արեղին եւ հարեղբաւրն Չաքարին եւ Աւետիսին՝ քարախ կոկողին եւ ծնողաց նորին... Մանաւանդ զստացողք լուսադարգ զրոցս զհարազատ եղբարքն եւ զկուսակրան քահանայքն զՍտեփաննոս եւ զԹումա եւ զծնողան իւրեանց զՄկրտիչ եւ զՄինայ : Նայեւ զարհիական զլուսն ստաշնորդ սուրբ ուխտին Յարութեան Նկարենայ գոէր Յոհաննէս եպիսկոպոս, որ է հարեղբաւրորդի ստացողաց սորա, զի է տեսուչ եւ ինամոզ եւ հայր բոս հոգուց որոցս եւ այրեաց» (Հ. Ն. Ակիւնեան, Հաւաքումն յիշատակարանաց) :

Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, գրուած 1461ին, վանքին ստաշնորդ կը յիշուի Մխիթար. «Եւ արդ ես Պաշտուր Շատանցիս ետու զձագրել զսուրբ զիրքս որ կոչի Մաշտոց... եւ ետու զսա ընծայ եւ նուէր ի սուրբ եւ ի հոգեւոր ուխտն ի դունն Նկարենայ սուրբ Յարութեան, յառաջնորդութեան տէր Մխիթար սրբազան եպիսկոպոսին ի վայելումն հրեշտակակրօն սուրբ կրօնաւորացն եւ մեր հոգեւոր որդոցն. Դաւիթենց Ստեփանոս կրօնաւորին, Արրահամ մահապատուն եւ Մէլքէսէթ սրբանեալ կրօնաւորին, զի նախախնամութեամբ եւ սրտացաւարար պահեսցեն զսուրբ զիրքս... եւ արդ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսուրբ Մաշթոցս ի դրանէ Նկարենայ սուրբ Յարութեան ոչ յեպիսկոպոսաց, եւ ոչ ի հէրպէտաց, ոչ ի կարգաւորաց եւ ոչ յաշխարհականաց» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց) :

Ասկէ յտառ 1448ին Հայրապետ արեղան աւետարան մը կ'ընծայարեղէ «Նկարենայ սուրբ Յարութեան եւ սուրբ Աստուածածնին հրեշտակարնակ մենաստանին» (Նոտարք, էջ 160) :

Նկարենայ վանքի մէջ 1552ին կը գրուի աւետարան մը սա յիշատակարանով՝ «Եւ արդ ես յետինս ի զրչաց... սուտանուն արեղայս Մկրտիչ կրանաւոր... կատարեցինք զսա մեղսամած մատամբ իմով... : Գրեցաւ սա յերկիրն Ըռուչտունայ ի սուրբ ուխտս ծո-